

ՀՀ Վայոց ձորի մարզպետը ներկա է գտնվել Եվրոպայի պատանեկան „Գրան Պրի“-ի բացման հանդիսավոր արարողությանը

03.10.2017



Հոկտեմբերի 3-ին Ջերմուկում՝ „Ջերմուկ Աշխարհ,, առողջարանային համալիրում, տեղի ունեցավ Եվրոպայի պատանեկան „Գրան Պրի,, մրցաշարի 2-րդ փուլի բացման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին ՀՀ Վայոց ձորի մարզի շախմատի ֆեդերացիայի նախագահ, ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, Հայաստանի շախմատի ֆեդերացիայի նախագահի առաջին տեղակալ, Հայաստանի շախմատի ակադեմիայի հիմնադիր-նախագահ Սմբատ Լպուտյանը, ԱԺ պատգամավոր Աշոտ Արսենյանը, մրցաշարի տնօրեն Գենադի Նեսիսը, Ջերմուկի քաղաքապետ Վարդան Հովհաննիսյանը, Հայաստանի շախմատի ֆեդերացիայի գործադիր տնօրեն Հրաչիկ Թավադյանը, բազմաթիվ հյուրեր և շախմատասերներ: Բացման արարողության ընթացքում մասնակիցներին ողջույնի խոսքով դիմեցին Գենադի Նեսիսը և Սմբատ Լպուտյանը: Հարկ է նշել, որ այս տարի Ջերմուկն արդեն երրորդ խոշոր մրցաշարն է ընդունում և դարձել է շախմատային քաղաք:

Բացման արարողությունն ուղեկցվել է տոնական համերգով:

աղբյուրը՝ <http://www.chessacademy.am>